



ՓՈՒՍԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ԱՌԱՔԵԼԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ԱՂԲՅՈՒՐ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆ...

Մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի առաքյալների դերը քրիստոնեական հավատքի տարածման և քրիստոնեական Եկեղեցու հաստատման գործում ունեցել է որոշադրիչ վճռական նշանակություն: Հիսուս Իր երկրավոր կյանքի ընթացքում Պաղեստին երկրից դուրս չեկավ. Նա միայն Իր ազգի՝ եբրայեցի ժողովրդի շրջանակներում քարոզեց Իր կրոնի ճշմարտությունները: Իր հարությունից հետո և երկինք համբառնալուց առաջ, Իր շուրջ համախմբված տասներկու առաքյալներին ուղղեց աշխարհումս Իր արտասանած վերջին բառերը, ասելով. «**Ինձ է տրված ամեն իշխանություն երկնքում և երկրի վրա. ինչպես Հայրը ինձ ուղարկեց, ես էլ ձեզ եմ ուղարկում: Գնացեք ուրեմն, աշակերտ դարձրե՛ք բոլոր հեթանոսներին, նրանց մկրտեցե՛ք Հոր, Որդու և Սուրբ Հոգու անունով: Ուսուցանե՛ք նրանց կատարել այն բոլորը, ինչ որ պատվիրեցի ձեզ: Եվ ահա ես ձեզ հետ եմ (լինելու) մինչև աշխարհի վախճանը» (Մատթ., ԻԸ 18—20):**

Արևից շառավիղող ճառագայթի նման Հիսուսի տասներկու առաքյալները և Հիսուսին հետևող աշակերտները տարածվեցին աշխարհի չորս կողմերը և Երկնային Լույսի շողերը ցանեցին ժողովուրդների կյանքերում: Նրանք իրենց քարոզության **խոսքին՝** որպես կնիք ճշմարտության ընծայեցին իրենց **արյունը** մարտիրոսության՝ երկնային սրբաճաճանչ պսակով գազաթավորելով իրենց երկրավոր կյանքերը:

Առաքյալների Քրիստոսատուր իշխանության և Քրիստոսապարզև հավատքի վրա հիմնվեցին Քրիստոսի Եկեղեցիները բազում ազգերի և երկրների մեջ: Տասներկուսից երկուսը՝ **Ս. Թադեոս և Ս. Բարթոլոմեոս** անուններով ճանաչված առաքյալները իրենց հավատքի և սիրո սերմերը ցանեցին Հայաստանի հողում և այնտեղ գտան իրենց առաքելության վախճանական պսակը, հայկական հողին խառնելով Ս. Հոգիով սպունգացյալ իրենց մարմինները, որպես սերմ ծլարձակելի: Նրանք եղան մեր Եկեղեցու առաջին հիմնադիրները, ինչպես հաճախ ասում ենք մեր եկեղեցաբանական լեզվով՝ **«Առաջին Լուսավորիչք Հայաստանյայց աշխարհի»:**

Նրանց տունը, այսինքն՝ նրանց անձերի, կյանքերի, հավատքի, առաքելության ոգու, քարոզության, ծառայության հիշատակի և պատգամի վերակենդանացումը մեր Եկեղեցու հավատացյալների կյանքում, մշտաթարմ

խմորի նման ներգործել է և ներգործում է մեր ազգի գիտակցության և հոգեխառնության, հիշողության և ինքնաճանաչության տարածքներում:

Մենք հպարտությամբ մեր Եկեղեցին կոչում ենք **Հայաստանյայց ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Եկեղեցի**: Առաքելական լինելը բնականորեն բացառիկ պատիվ է մեր Եկեղեցուն: Բայց **առաքելությունը** սուկ պատմական ծագումի, ժամանակային սկզբնավորումի հարց չէ մեզ համար: Դա անցյալից ժառանգված մի տեսակ կայական, ձևական հատկանիշ չէ միայն: Առաքելականությունը նաև ու մանավանդ այսօրվա հատուկ և մշտակենդան երևույթ է, որովհետև մեր Եկեղեցին առաքյալներից ժառանգել է **առաքելության կոչումը** որպես իր գոյության իմաստն ու նպատակը: **Առաքելություն** կնշանակի **առաքելության** ներշնչման անսպառելի ուժ:

Մեր հայրերն այսպես են իմացել առաքելականության իմաստը և այդ հասկացողությամբ Եկեղեցին ըմբռնել են հաստատված «**ի վերայ հիման սուրբ առաքելոց**»: Առաքյալներին նվիրված տոները բազմաթիվ են և բազմերանգ մեր Եկեղեցու ծիսական կարգում: Գեղեցկահյուս և հոգելից շարականներ են հորինվել նրանց հիշատակի պանծացման համար: Ներբողներ են գրվել ի խնդիր նրանց կատարած գործի գովերգության և արժևորման:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

